

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Բաղաձական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 29

Գ. ՇՐՋԱՆ

20 ՅՈՒՆԻՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների արեւմտեան բաժանորդացիներն ե Կ. Պոլսոյ համար Բաւաւաւն ղը. եւ գաւաւններուն համար Յիւսւն ղը., կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստրական ծախքը խմբագրութեան վրայ ե: Վեցամսեայ բաժանորդագրութեան լրնկումնոր: Բաժանորդագրութիւնները կը սկսին արեւելոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'եղի արեւելոյ շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պիտի ե խիղցն խմբագրութեան: Ժամանակ անցնելի վերջ աշխատեալիս եւս կորիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռք կը ծախուի ՀԱՏԲ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցե

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزتهسى اداره سنه

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ ՇԱՊԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ (Կալաթա, Վոյվոդա փողոց թիւ 85) բացուած ըլլալով, մէկ տասնամեկ իրագործելի վերջնական լիքիտասիծն մը ընկուկապատկով իւր գործառնութեանց սկսած է Գիտերը բացարձակապէս ածան. օգտուեցէք առիթէն եւ այցելեցէք այդ ծանօթ վաճառատունը ուր պիտի գտնէք, ընտիր տեսակէ, չապիկ, օձիկ, թեւոց, գուլպայ, թաշկիւնակ, կոծակ, անուշահոտութեանց ստաւար տեսակներ եւայլն:

1-2

ՆՇԱՆ ԶԱՄԻՉԵԱՆԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Մահմուտ-Փաշա Իսմայիլ Խանի սակ թիւ 86

Մասնագէտ հարսանեաց մոմերու եւ մկրտութեան հաղուստներու, ուր մեծ խնամքով կը պատրաստուին ամէն տեսակ ՀԱՐՍԻ ՄՈՄԵՐ Դերամասշելի գիներով:

Յիշեալ վաճառատան մէջ կը գտնուին նաեւ ամէն տեսակ մկրտութեան հաղուստներ, հարսանեկան քօղքեր, կաշանդներ, գլխարկի ծաղիկ, փետուր, էկրէզ, տերեւ, պտուէ, տաթէլ, քորտէլա: Անգամ մը այցելեցէք այս վաճառատունը եւ յետոյ ուրիշ տեղէ գնեցէք, ահա գեղեցիկ առիթ մը ընթերցողաց:

1-2

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՒԵՐԸ իր ձրի գրացուցակով կը խոստանայ, Մէարիֆէ վաւերացուած ամէն տեսակ գիրք, նոյն իսկ մէկ հատ, զրկել ամէն կողմ՝ Պօլսոյ գինով, առանց թղթատարի ծախք պահանջելու: Դասադիրքերու ընտրութիւն մի՛ ընէք՝ Մարգարեան Գրատան հրատարակութիւնները չի տեսած, Դիմել Կ. Պօլսո, Մէրճան փողոց, թիւ 57, Մարգարեան Գրատուն:

1-2

“AU TALON D'OR,”

O ԹԱԼՈՆ Տ'ՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԵԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՐԼՕ ԱՇՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՑ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐ

Նաեւ կողերու համար սրահառուած

Կաշարա, Վոյվոդա փողոց, թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորածնութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ չիմուկիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կաշարա-Սերայի Լիսէին դէմ

Դե. Նե. Շք. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11½

Բե. Դե. Ուր. օրերը 6 Կէ մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆ Եւ զրուցատեղի կան ընթերցարան: Յօրինեց ԱՆԴՐԱՆԻԿ ԼՔԵՍՏԷԼԷՃՅԱՆ: Գին 2 զրուշ:

Գերմաներէն սորվել փափաղող հայ աղջկ համար պիտանի զասագիրք մըն է այս գրքի:



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ

34,775.642 Փ ս.բ.

Նրաշխարարութեան գումար

121,765 333

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172.000

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ Բաշափին վրայ, Մանասան Երկր

Ընդհ. Գնահ. Գործակալ
Ա. ՀԻՒՐՄԻԻՉ

Ընդհ. Գործակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵՐԵՆ

ՄԱՍԻՆ

517 ՏԱՐԻ

— 20 ՅՈՒԼԻՍ 1902 —

ԹԻԻ 29

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամուսնալուծում (նմրագրական) Տ. Ա. — Կիլիկիան յուզեր. ՍՍՍԱՆՆ ՎԱՐԴԱՊԵՏ : — Կղմանկ (Հովնական առաքալեայ) ՄԷՐՄԷՏԷՍ : — Իմ կեանքս (Բանաստեղծութիւն) ԵՂԻՍ ՏԷ. ՄԻՐՃԻՍԱՆՆ : — Ժողովրդային առաքներ. ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱՆԵՍՆ : — Սիրերգներու ժողով. Վ. ԳՈՒՅՈՒՄՅԱՆՆ : — Ինչու (Սիրերգ) ՎԱՐԴԱՊԷՍ : — Սյարենանի հոգեհանգիստը : — Յուշեր :

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՄ

Հայրապետական Կոնգակ մը , որուն ամփոփումը հրատարակեցին օրաթերթերը , առաջնալուծման ու կրկնամուսնութեան պայմանները ի յայտ կը բերէ նոր ու ինքնատիպ երեւոյթի մը տակ , մինչեւ հիմայ ըմբռնումներէն ու գործադրութեաներէն աւելի լայն տարածումը :

Խղիւրդ անձի վրայ չըլլալով , այլ սկզբունքի վրայ , իրողութիւնը յիշենք՝ առանց անուններ տալու : — Ասկէ իրր վեց ամիս առաջ , Ն. Ս. Օծութիւնը՝ իրեն եղած դիմումի մը վրայ՝ գիր մը ուղղելով Պատրիարքարան , արածնութիւն կուտար կնոջմէն բանուած երիտասարդի մը՝ վերստին ամուսնանալու , միեւնոյն ատեն այդ արածնութիւնը զանալով լքուած կնոջը : Այս Հայրապետական յանձնարարութիւնը ստանալուն , Կրօնական Ժողովը փութաց բացատրական գիր մը ուղղել Էջմիածին , արդարացեալով կրկնամուսնանալու իրաւունքէն զրկուած կողմը — կինը — եւ յայտարարելով թէ մեղադար ընթացք մը ունեցած՝ չէ անիկայ : Լրագրութեան համար , մութ մնաց սաղաքական , թէ Կրօնական Ժողովը՝ իր այդ միջամտութեամբ՝ ի՞նչ եղբակացութեան կը բաղկէր . — ամուսնութիւնը ընա՛ւ չի լուծել , թէ ոչ՝ երկու կողմին ալ հաւաքաբար տարածնութիւն տալ վերստին կարգուելու :

Իրողութիւնը սա է որ , Ս. Հայրապետը՝ բարեփոխելով իր նախորդ որոշումը՝ այս անգամ երկրորդ գիր մը ուղղած է Պատրիարքարան , որուն մէջ կըսէ թէ քանի որ երկու ամուսնակներուն միջեւ սէր եւ վստահութիւն վերցած եւ երկուսիկ կենսակցութիւնը անհնար է աշխատ , ուստի երկուքին ալ առանձին առանձին նորէն ամուսնանալու արտօնութիւն կը չնորոգէ :

Հայրապետական այս բացորոշ եւ կտրուկ հրամանին վրայ , ուրիշ բան ընել չէր մնար Պատրիարքարանին , բայց եթէ հազորդել զայն բաժնուած ամուսնակներուն եւ անոնց տաներէցներուն , — ինչ որ կատարուած ըլլալու է արդէն :

Մեր Եկեղեցւոյ հոգեւոր պետին այս թոյլատու հրամանը , որ ամուսնական կեանքի պատահական դժբաղդութիւններուն գիտակցողի մը կը բղիխի եւ անշուշտ հիմնուած է եկեղեցական կանոններու վրայ , սկզբունք մը կը նուիրագործէ , — վստիկ կարելի չէ ենթադրել թէ բացառաբար տրուած ըլլայ այսինչ ամուսնի ի նպատակ ու վաղը զացուի այսինչ ամուսնի որ համանման դիմում մը ընէ , — Ազգ. Պատրիարքարանի բովէն , անցնելով ի հարկէ իր խնդրանքը , — Ն. Ս. Օծութեան մօտ : Այս ըսել չէ անշուշտ , թէ՛ այն էրկու կնիկները որոնց ընտանեկան յարկէն սէրը ու

վտանգութիւնը վերցած են՝ պիտի կրնան ամուսնալուծման վճիռ ձեռք բերել իսկոյն . բայց երբ կենակցութիւնը անհնար գարձած է այլեւս անոնց միջեւ , ո՛չ թէ գաղափարային կերպով՝ այլ իրականապէս , երբ զիրար ձգած են , մէկտեղ չեն ապրիր ու ա՛լ չպիտի կրնան ապրիլ երբեք , երբ զանոնք բաժնողը պարզ դժտութիւն մը չէ , որ միջնորդութեամբ վերջ գտնէր , այլ անհաշտութեան ու պժգանքի զգացում մը՝ մէկ կամ միւս կողմէն , որուն շարժառիթները Դատաստանական Խորհուրդին առջեւ երթալ նկարագրելու ապացուցանելը ամէն անհատի ու ամէն բնաւորութեան տրուած չէ , այլ պարագային՝ կրճն . Ժողով , Փոխանորդարան , Դատաստանական Խորհուրդ՝ իրողութիւնը քննելով , ստուգելով , ինքզինքնին արտօնուած պիտի զգան՝ խղճի ու մարդասիրութեան համաձայն լուծել ամուսնական միութիւն մը որ արդէն դադարած է գոյութիւն ունենալէ , ինչպէս ներկայ պարագային մէջ ըրաւ Ս . Հայրապետը : Ն . Ս . Օծութիւնը կընդունի ուրեմն՝ Թրանսպրիներուն incompatibilité de mœurs ըսած կացութիւնը՝ ամուսնական կեանքի մէջ , եւ երբ այդ անհամերաշխութիւնը ծայր աստիճանի հասնի՝ ամուսնալուծման հարկ կը տեսնէ : Այս կերպով , «նախընթաց» մը (précédent) կը հաստատէ , զոր իրա՛ւ է թէ պէտք չէ չարաչար գործածել , բայց որ նոր յենարան մը կ'աւելցնէ ամուսնալուծման ի նպաստ : Իր հայեցակէտը դերազանցապէս վեր է ստոր ու ճղճիմ մտածումներէ , եւ եթէ ամուսնալուծման ուխտեալ հակառակորդները դժգոհութեան շարժում մը զսպելին՝ կարգաւորվ արուած վճիռը , անդին՝ ստուար մեծամասնութիւն մը անսի մէջ աւստա խանդաղատանք մը , կարեկցութիւն մը , լայն ըմբռնում մը եկեղեցական օրէնքի ոգիին՝ փոխանակ անոր տառին կառչելու , եւ ընտանեկան յարկերու խանգարուած անգործութիւնը այլապէս վերահաստատուելու բարի ձգտում մը :

Երբ արդի Ս . Հայրապետը ամուսնալուծման իր առաջին վճիռը հաղորդեց Պատրիարքարանին , եօթը-ութը տարի առաջ , բմիչիկ մը ի նպաստ որուն կրկնամուսնութեան հրա-

ման կուտար , բուն տալաւորութիւն մը առաջ եկաւ մեր կղերական չըջանակներուն մէջ մանաւանդ , ու արտունջներ լսուեցան . բայց արդար կերպով կատարուած համանման ամուսնալուծմանց որոշումներ , Սինոդական արձանագրութեամբ , յաջորդելով իրարու , առաջին տալաւորութիւնը մեղմացուցին տակաւ տակաւ , եւ ինչ որ գայթակղական բան մը կերեւար անվարժներու աչքին՝ շատ բնական դարձաւ . Պոստահայ մամուլին մէջ՝ Բիւզանդիոն ամօնէին ջերմ ջատագովը հանդիսացաւ ամուսնալուծութեան սկզբունքին ու կիրքի կուրծի , եւ թէեւ լրագրական վէճեր , թիւ ուղէմ կարծիքներ փոխանակուեցան՝ այլ թուականներուն՝ երկար ու խիստ , բայց միեւնոյն ատեն անդգալապէս մեր բարեբուն մէջ մտաւ ապահարդանը , սեղմաւ պայմաններով ու գրեթէ միշտ բացառութիւն նկատուելով , բայց վերջապէս ընդունուեցաւ Տրուած հայրապետական վճիռները ընդհանրապէս մէկ կողմին իրաւունք կուտային , միւս կողմը իրեւ մեղապարս՝ զրկելով պատիւի :

Այս անգամ , այդ խստութեան սահմանը քիչ մը կընդարձակուի , ինչ որ բարեզգի սկզբնաւորութիւն մը եւ յաջող քաջ մըն է ղէպի լուծումը այն ընտանեկան դառն խնդիրներուն ու ցաւալի պառակտումներուն որոնք պատկին անլուծանելիութեան բաղխելով , ամուսնալուծման արտաթափման գարձուցած են անքան երիտասարդ ու ծիծաղկոտ կեանքեր :

8. Ս.

Ամեն . Օրմանեան Ս . Պատրիարքարանի մէջ երեքշաբթի օրը Ազգ . Պատրիարքարանի մէջ զրազեցաւ կարգ մը անհրաժեշտ գործերով , Յետոյ , Դիւանաառններն այցելելով , դիւանապետ է. ք. ներուն հրահանգներ առաւ եւ յանձնարարեց՝ ստորագրուելիք պաշտօնագրերը վաւթով ամբողջացնել եւ ներկայցնել իրեն : — Ն . Սրբազնութիւնը յաջորդ տառախոսուն Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ նախագահեց Նպաստից Յանձնաժողովին եւ միջօրէին Պատրիարքարան գնաց : — Հինգշաբթի օրուան համար Ստան Ժողովը նիստի հրաւիրուած չէր , ինչպէս թուրքական ժամուցած էին մէկ-երկու թերթեր :

Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք

(ՀՈՎՈՒՍԱԿԱՆ ԱՆՍՆԴԱՎԷՊ)

Իրիկնադէմի պահն էր ու գիւղին հօտադ-
ները, դաշտին առ ու ան անկիւնէն հաւաք-
ման անուշ եղանակ մը սկսած էին հնչեցնել
իրենց սրինգներով : Սարերու կատարէն,
մարմանդներէն ու ծմակներէն ոչխարներու
ամբողջ խումբեր դէպ ի սարահարթը կը խու-
ժէին, եւ անոնց ետեւէն ալ, ճերմակ դառ-
նակներու երամ մը կը զլտորէր, խոշոր ձի-
նազդակներու պէս : Հօտերուն մայրենին ու
սրինգներուն խաղերը իրար խառնուած էին,
եւ առջ ընրած ակորթելի երաժշտութիւն
մը՝ զոր ամենի գամբռներու խալտոս հալիւնը
կը խաթարէր պահէ պահ : Դիչ առ քիչ դաշտին
կանաչը իր բովանդակ տարածութեամբ
ծածկուեցաւ ճերմակով : Գիւղին բոլոր հօ-
տերն ալ հոն էին, ոմանք մեծ, ոմանք պզտիկ,
իյնպէս նաեւ հօտադները՝ երբեմն սիրուն ու
կորովի տղաք՝ որոնց մարմինն մերկութիւնը
կէս մէջքն ի վար ձգուած միակ օղէնի մը կը
ծածկէր, եւ երբեմն ալ գեղանի աղջիկներ,
գիւղական պարզ ու խառնուրդ հագուածնե-
րով՝ որոնք արեւահար կուրծքերու երկու
գրգռա ըւրպերը բայ թողած էին մայրամուտ-
քի կարմրին տակ :

Կէս ժամ վերջ ըստը հօտերն ալ ճամբայ
եղած էին դէպի գիւղ, առանձին առանձին,
ու մի միայն գամբռներու հսկողութեամբ :
Հօտադները՝ հանդիպակաց սարի մը կռնակէն
տարեր եւ աւելի մօտ ճամբով մը կ'իջնէին
գիւղ, թողով որ հաւատարիմ շուները՝ հօ-
տերը գոմ առաջնորդեն, ինչ որ միշտ տեղի
կ'ունենար կատարեալ ապահովութեամբ :
Գամբռները երբոր իրենց հօտին գլուխը կը
գտնուին, ալ ընաւ պէտք չի մնար հովուի.
ո՛չ գայլ իրնայ մօտենալ անոնց, ո՛չ ալ գոգ :

Նոյն օրը սակայն դաշտին կանաչը ամ-
բողջովին չմաքրուեցաւ հօտերուն մեկնիկէն
վերջ : Սարի մը կուշտը, հօտ մը կանգ ա-
ռած էր տակաւին, եւ ոչխարներու ճլղուքը

ի վեր իրենց հօտադին կը յիշեցնէր թէ գիւղ
մանելու ժամանակը սկսած է անցնիլ : Հօ-
տադը, ընրան հուժկու ծնունդ մը՝ որ սարին
կատարը ցցած էր իր հսկայ հասակը, մասամբ
կըսած ահագին ցուպի մը վրայ, կարեւորու-
թիւն անգամ չէր սար ոտքերուն տակ պճրա-
կող անասուններու այդ կանչին : Հազիւ եր-
բեմն գլխու անտարրեր շարժումով մը աչ-
քերը իր հօտին վրայ կը խոնարհեցնէր. կար-
ճատեւ, գրեթէ փայլակի շարժում մը ուրկէ
վերջ իր արծիւի վէս ակնարկը կրկին դառ-
նուած կը մնար գիւղին ճամբուն վրայ :

Համայնքին ամէնէն հարուստ եւ ամէնէն
յարգուած տանուտէրներէն մէկուն, Սարգսնց
Յակոբի հօտադն էր առիկա, Սէրգօն՝ որուն
բազուկը ոչ ոք կրնար պրկիլ գիւղին մէջ,
եւ որուն համար կը պատմէին թէ մինակը,
եւ առանց զէնքի, մի միայն երկու ձեռքե-
րուն շնորհիւ երեք գայլ մէկանց սղաննած
էր ձիւնի օր մը : Այն իրիկունը, միւս հօտադ-
ները կանչած էին զինքը՝ միասին ձեռք առ-
նելու համար գիւղի ճամբան, բայց ինք չէր
ուզած անոնց հետեւիլ, առարկելով թէ գառ-
նուկ մը մոլորած էր իր հօտէն, եւ թէ զայն
փնտռելու համար քիչ մը ատեն ալ պիտի
ստիպուի դաշտէն չհեռանալ : Միւսները մեկ-
նած էին, եւ ինք այդ ցից սարին կատարը
բարձրացած՝ նայուածքը յառած էր այդպէս
դէպ ի գիւղը, նայուածք մը՝ զոր արեւին
հօգեվարքի վառքն իսկ չէր զօրեր խախտեց-
նելու, եւ որ ուշադիր հորիզոնը կը խռզէր :

Սերգօ սակայն գառնուկ չէր կորսնցու-
ցած, այլ հոգ կը սպասէր Սարգսնց Յակո-
բի աղջկան, գեղանի Մարիային, որուն հա-
մար այնչափ տղաք կը վառէին գիւղին մէջ,
եւ որ ամէնուն ալ անմատչելի կը մնար :
Մարիա՝ նոյն առաւուն, հօտին արթննալէն
առաջ, դադառուկ մը դոմ մանելով պատուի-
րած էր Սէրգօն որ իրիկուն, հօտադներուն

մեկնումէն վերջ , իրեն սպասէ դաշտին մէջ :

Այդ օրը Սերգօ բաւական մտածկոտ անցուցած էր , մինչեւ իրիկուն ինքզինքը հետեւ պահելով իր ընկերներէն , որոնք քանիցս ի գուր փորձած էին իր զուարթ բնաւորութիւնը արթնցնել : Ի՞նչու համար Մարիա այդպէս ժամադիր եղած էր , ինք ի՞նչ առնչութիւն կրնար ունենալ իր տանուաէրին ազնւոյնը հետ : Օ՛հ , գիտէր որ Մարիա շատ գեղեցիկ էր , շատ հրապուրիչ , գրեթէ երկնային արարած մը , բայց վերջապէս իր տանուաէրին աղջիկն էր , եւ հօտադիր մը համար պարզապէս սրբապղծութիւն է իր տանուաէրին պատկանող ո՛ր եւ է բանի վրայ աչք նետելը : Մարիա ի՞նչ պիտի ըսէր իրեն : Օրը ամբողջ այդ հարցումներով անցուցած էր , առանց անոնց պատասխան մը գտնելու . անապահովութիւն մը , անտուգութիւն մը խռովք տուած էին իր հոգիին , խռովք մը՝ զոր վայրկեան մը առաջ անհետացնելու համար այդպէս կանգնած էր սարին կատարը , ու կը սպասէր որ Մարիայի գալուստը յայտնող ո՛ր եւ է նշան մը տեսնէ չորսդին :

Վերջապէս , գիւղին կէս հեռաւորութեամբը , ճամբուն վրայ յանկարծ փռչիլ ամպ մը բարձրացաւ : Ձի մը կուգար վարէն : Սերգոյի սիրտը արօրեց , որովհետեւ կենդանիին վաղքէն հասկցաւ որ Մարիան միայն կրնար ըլլալ եկողը : Սխալած չէր . Բանի մը վայրկեան վերջ , փռչիլ ամպը անցաւ գնաց իր գլխուն վրայէն , ու վարը , սարին աջեւ , Մարիա յայտնուեցաւ անբճային երեւոյթի մը պէս՝ հեծած իր հօրը սեւ ձիուն վրայ որուն կողերը կը միային՝ այդ խօլ վաղքէն հրդեհուած :

Սերգօ անշարժ մնաց իր դիրքին մէջ , երբեք Մարիան այդչափ գեղեցիկ , այդչափ գրաւիչ չէր տեսած : Արեւը տակաւին չէր չիջած , ու վերջապէս յորդ կարմրութեան տակ Սարգսնոց Յակոբի աղջիկը կը փողփողէր իր հրաշալի մարմնին թուր շնորհներով : Հագուստին վրայ արտաքոյ կարդի բան մը չկար : Գիւղին աղջիկներուն սովորական տարազը հագած էր , տարազ մը որ նոյնն էր հարուստին եւ աղքատին համար . ցունաւոր

պարզ շրջազգեստ մը՝ որ հազիւ մինչեւ բուրեղուն կատարը կը հասնէր , եւ որուն տակէն անվարտի ազդրերուն կերտուածքը կը զգացուէր իր բովանդակ շքեղութեամբ , ու խաշտձեւ երիւցներով ծանրաբեռնուած բան կ'ոն մը՝ որ բաց կուրծքով շապիկի մը վրայ կ'ոճկուած էր , եւ որուն մէջտեղէն երկու կեանքոտ սալնքներ բուռ բուռ դուրս ցցուած էին իրենց առոյգ պտուղներով : Հովը խցած էր ժապուէնէ վարսակալը եւ մաղերը՝ պռնիւնէն իրարու ագուցուած խեղու պէս կը գալարուէին ծոծրակն ի վար , մինչեւ կ'անկին վերջաւորութիւնը : Աւ գէմքին վրայ , այսուրը , թարս՝ թարս՝ ճեղքուած ձմերուկ մը վարդ գոյնը սաացած էին ձիուն արշաւաւ սոյր գնացքէն :

Սարին կուշաէն , առասպելային ամազոնի այդ կեցուածքին մէջ , աղջիկը դէպ ի վեր բարձրացուց արեւին լոյսէն առնուած աչքերը , ու ձեռքները կողերուն վրայ հանդիպեցուցած սպասեց , կարծես կը փափաքէր որ Սերգօ ուզածին պէս ըմբռնէ իր փորձիկ երեւոյթը : Յետոյ , տեսնելով որ վերէն ձայն չիւլէր , կանչեց գրողիչ աւաղով մը՝ որուն մէջ ամէն բանէ աւելի աղապատանքի չեղած մը ինքզինքը կը զգացնէր :

— Սե՛րգօ , վար , հոս եկուր :

Հօտաղը լսեց այդ ձայնը , բայց չկրցաւ հնազանդիլ : Աղջկան գիւթիչ անոքը բոլորովին զգլխած էր զինքը , եւ իր կորովի կարոտնով իրանը յուլօրէն կը առատանէր երկու օրունքներուն վրայ , պատուանդանէ զուրկ սիւնի մը պէս որ մատի միակ հարուստով մը կրնայ զղեմնուիլ :

— Սե՛րգօ , ձայնեց աղջիկը նորէն :

Հօտաղը կրկին լուռ մնաց : Այդ ձայնը որուն այնչափ տարիներ հնազանդած էր կուրծէն՝ խարտանի մը պէս կը շաչէր ակամեւ ներսն տակ , բայց կամքը կ'ընդգէր իրեն դէմ . չէր կրնար աւելէն շարժիլ եւ աշուրնալը յամառօրէն կառչած կը մնային այն հրաշալի տեսիլքին , զոր աղջիկը կը պարզէր ձիուն վրայէն :

Մարիա երրորդ անգամ մըն ալ ձայն տուաւ :

— Սե՛րգօ , հոս եկուր :

Երիտասարդը նորէն չպատասխանեց ։ Այս անգամ ստիպեց մեղի Ժպիտ մը խաղաղաց աղջկան չըթուներնրուն վրայ ։ Հասկցած էր վերապէս թէ Սերգօ ինչո՞ւ այդպէս լուռ կը մնար իր սարին կատարը ։ Յետոյ ձիէն վար ցատկեց , եւ սրինքի եղանակով մը ոչխարներն ու դամբուրը դէպ ի գիւղ ճամբու ղենեւէ վերջ սկսաւ սարն ի վեր բարձրանալ ։

* * *

Երբոր Մարիա սարին կատարը հասաւ , իրիկունը բաւական առաջացած էր արդէն ։ Արեւմուտքի կողմը չքեղ վերջալոյս մը նկարուած էր երկինքին վրայ , դրեթէ ամբողջութեամբ հրդեհուած գեհննի կարմիրով մը ուրուն վրայ ամպի դեղին պատառիկներ կը գալարէին մեղաւոր հոգիներու պէս ։ Գաշաղէք փողկողէր այդ վառքին տակ , եւ մօտայայ լեռներուն ժեռուաւ կողերն ի վար , մինչեւ ստուերոտ եւ հովասուն մարմանդները լոյս լայն ու բեկբեկուն դիծեր երկարած էին , կայծակներ կարծես՝ զօրս անծանօթ զօրութիւն մը քարացուցած ըլլար մօայլ երկինքի մը վրայ ։ Սերգօ՝ ինքն ալ մայրամուտէ քիչ քիչ կրակը հագած՝ առասպելային տիտաւթի մը պէս հսկայ մարմինը ցցած էր սարին կատարը , միշտ կրթնած իր՝ հովուական ցուպին՝ անշարժ , անխօսուելի ։ Կուրծքը բաց էր ամբողջովին , արեւահար ու ստուերոտ կուրծք մը որուն վրայ մազերը կը հովթիէին թեթեւ փեղք մը որ դաշաղ աւելէն վերջ կուգար սարին կողերն ի վեր փչուելի ։

Մարիա յուշիկ մը անոր մօտեցաւ , ու նայնց մեղմօրէն ։

— Սերգօ , չե՞ս ճանչնար զիս ։

Գոուիչ , մեղկացնող շեշտ մը կար աղջկան այդ անուշ աւաչին մէջ , շեշտ մը՝ որ սարու առաւ տուաւ երիտասաղ հօտաղին ։

— Սերգօ , կրկնեց աղջիկը նորէն , եւ իւր , իրիկունն ամենէն անուշ պահն է , երբ նստինք սա ժայռին վրայ ։

Մարիա այն աստիճան մօտեցած էր իրեն որ երիտասարդը դէմքին վրայ զգաց անոր տաք , վառող շունչը ։ Յնչու մը դրդեց իր արձանի կեցուածքը ։ Թեւերը թուլցան , եւ ցուպը ձեռքէն սահելով գնաց գլորիլ սարն ի վար , իր անկրկնելի մէջ խռովելով հանգիստը

քանի մը մօղէմներու որոնք մեղիկի շոյս սահանքով մը դէպի աւելի ապահով ծակեր սողացին ։

Աղջիկը քիչ մըն ալ մօտեցաւ հօտաղին , ու թեւէն բռնելով սկսաւ իրեն քաշել զայն ։

— Եկու՛ր , կ'ըսէր նոյն ատեն , եկուր նստինք ։

Սերգօ թող տուաւ որ զինքը տանի ։ Աղջկան կոչը երգի մը պէս կուգար ակօնջին , եւ հոգին ա'յն աստիճան գրաւուած էր անով որ իրեն համար բոլորովին անկարելի էր անոր դէմ ընդվզիլ ։ Այդպէս գնաց մինչեւ մօտակայ ժայռ մը՝ զոր տնձրեւներ տափակցուցած էին , եւ որուն վրայ Մարիա նստեցունց զինքը ։

Արեւը երթալով կը խոնարհէր դէպի մայրամուտքը , եւ զիշերնադէմի գորշ ամպեր տակաւ կը խեղդէին արեւմուտքի երկինքին հրդեհի վառքը ։ Վարը , դաշտին մէջ ամէն բան մեռելի հանդարտութիւն մը ստացած էր ։ Միայն մօտակայ ծմակներէն երբեմն երբեմն օձի մը սոյլը՝ արձագանդ կուտար լեռնէ լեռ ։

— Սերգօ , ըսաւ Մարիա՝ նստելնէն վերջ , ինչո՞ւ ինծի չես նայիր ։

Երիտասարդը մեքենաբար հնազանդեցաւ՝ եւ աղջկան փողփողուն դէմքին վրայ խոնարհեցուց իր ուժարեկ նայուածքը ։ Ընդդիմութեան ո՛ր եւ է ոյժ չէր մնացած վրան ։

— Սերգօ , կրկնեց Մարիա՝ այդ անգամ յաղթանակէն ուրախացած , ինչո՞ւ չես խօսիր ։

— Խօն խօսիմ , ձայնեց հօտաղը երազկոտ ։ Աղջկան դէմքը ճառագայթեցաւ ։

— Ըսէ՛ , ձայնեց յուզիչ շեշտով մը , մեր գիւղին մէջ իզմէ աղուոր աղջիկ մը կա՞յ . . .

— Այս կողմերը արեւը՝ աւելի գեղեցիկ դէմք մը չէ՛ ողջունած , պատասխանեց Սերգօ միշտ երազկոտ ։

— Եւ այս սարերն ալ քեզմէ աւելի հուժկու , քեզմէ աւելի հրապուրիչ տղամարդու մը քայլերը չեն զգացած իրենց վրայ , անանկ չէ՞ ։

Սերգօ խռովուն նայուածք մը գամեց աղջկան դէմքին ։ Խօն ըսել կ'ուզէր Մարիա ։ Մինչեւ ան ատեն՝ տակաւին որոշ բան մը չէր հասկցած ո՛չ առտուն տրուած ժամադր-

բութենէն , ո՛չ Մարիայի նոյն իրիկուան ընթացքէն , ոչ ալ սարին զլուսը , կէս մը բռնի սկսուած այդ զլուս զլսի խօսակցութենէն : Իր աչքին՝ տանուաւորը աղջկան հրաշալի գեղեցկութիւնը միայն կերեւար , գեղեցկութիւն մը որ ամբողջովին գրաւած էր զինքը , միեւնոյն ատեն մաքին բովանդակ թափը խեղդելով : Այդ գովեստը զոր աղջիկը կ'ընէր իր արուի յատկութեանց համար , պզտիկ մը սթափեցուց զինքը . մտածեց թէ առտուան ժամագրութիւնը իր հօտաղի , սպասաւորի , գրեթէ գերիի դերին հետ առնչութիւն ունեցող բան մը ըլլալու չէր : Բայց ան ատեն . . . սէր արդեօք . . . 25^օ մի որ Մարիայէն առաջ գիւղին այնչափ աղջիկ հօտադներն ալ միեւնոյն խօսքերը ըսած էին իրեն , խօսքեր զորս արհամարհօտ ուսի ցնցումով մը ընդունած էր , իր արուի սէգ խորխտութիւնը չուզելով մեղկ խօնարհումով մը ազատուել :

Սերգօ սակայն իսկոյն վանեց այդ ենթադրութիւնը : Ինք պարզ հօտաղ մը եւ իր տանուտիրոջ աղջիկը . . . ասիկա սրբապղծութիւն մը կ'երեւար իրեն , Մարիա կրնար իր տէրը ըլլալ , կրնար գերիի մը պէս գործածել զինքը , բայց երբեք չէր կրնար սիրոյ կապով մը զօդուիլ իրեն հետ : Ոճիր մը պիտի ըլլար ատիկա , խղումը տիրոջ եւ ծառային միջեւ գտնուող կապի մը՝ որուն բովանդակ նուիրականութիւնը հօրմէն ստրկած էր , եւ զոր պիտի յարգէր այնչափ՝ որչափ ատեն որ շունչը չբաժնուէր իրմէ :

Այսպէս մտածելով , Սերգօ վերջի վերջոյ սա համոզման յանգեցաւ թէ Մարիա անպատճառ իրմէ ծառայութիւն մը խնդրելու համար ժամադիր եղած էր հոգ , եւ թէ այն քանի մը գովեստի խօսքերն ալ զորս ուղղած էր իրեն , պարզապէս առաջարկուելիք գործին ծանրութիւնը չզգացնելու համար էր միայն :

Այս համոզումը գոյացուցած էր արդէն , երբ աղջիկը անգամ մըն ալ ձայնեց իրեն .

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ , պատասխանեց Սերգօ հանդարտ ձայնով մը :

— 26^օ գիտե՛ք , հարցուց աղջիկը սառնանի ժպիտով մը :

Սերգօ կրկին խռովեցաւ : Բայց այս ան-

գամ ժամանակ չունեցաւ աւելի երկար մտածելու : Մարիա իր տաք , գրգռուած մարմինը իրեն մօտեցուցած էր , եւ նայեալիս փշտակիչ երգ մը կը բարձրանար իր ղէքի վեր :

— Կ'ուզեմ որ զիւղին ամէնէն կողմի հօտաղը իր չրթունքներուն մեղքը ծծել ապրինի . . . Կ'ուզեմ որ զիւղին ամէնէն գեղեցիկ աղամարդը իր բազուկներով զօտի կապէ մէջ քիս . . .

Սերգօ սկսաւ ընկրկիլ . երբը սակաւ , այդ զլլելիչ , գինովցնող երգը որ կարծես զիւթական բերնէ մը կը ծորէր , հետաքննող զինքը :

— Կ'ուզեմ որ զիւղին ամէնէն արեւոտ աղան եղէգի մը պէս պրկէ մարմինս . . . Կ'ուզեմ որ զիւղին ամէնէն քաջ հօտաղը զգեսնէ զիս . . .

Սերգօ կեցաւ : Ամէն բան մոռցած էր : Ա՛լ տիրոջ առջեւ գտնուող գերին չէր , մէկ բան կ'երեւար աչքին , ո՛չ այն նուիրական կապը՝ որ զինքը իր տէրերուն կը զօդէր իբր ստրուկ , ո՛չ այն պատկառօտ յարգանքը որուն մինչեւ այն ատեն վարժուած էր աւարկայ գարձնել իր տանուտիրոջ աղջիկը :

Մարիա չարունակեց .

— Կ'ուզեմ որ զիւղին ամէնէն անուշ աղան սիրէ զիս , կը լսե՞ս , Սերգօ , կ'ուզեմ որ զիւղին ամէնէն անուշ աղան սիրէ զիս . . . եւ գուն ես գիւղին ամէնէն անուշ աղան . . .

Այդչափին իսկ քաւական էր արդէն : Արեւի զգայնութիւնը գրաւած էր երկասարկ հօտաղը , եւ այդ զգայնութեան զրդիւնով է որ յանկարծ նկատուեցաւ իրմէ քանի մը քաղանդին գտնուող այդ ինքնամատոյց էջի վրայ , պրկեց զայն իր կորովի բազուկներով , եւ լեռնականի բրտութեամբ մը զգեսնեց գեսնի հարթ խարակին վրայ :

Աղջիկը չզգաց անգամ ոսկորներուն ցուրտը : Այդ բրտութիւնը հաճոյք պատճառեց իրեն : 27^օ սիւղ մը սկսած էր անցնիլ ասիկա կատարէն , եւ մայրամուտքին հանդիպող կողմը , լեռներու գագաթը գրաւուած էր զնշերուն առաջին մշուշներով : Դաշար , հանդարտ ծովու լռութեան մը մէջ քարացած էր կարծես , եւ սարին կողերուն վրայ միայն

քանի որ լեռնային ճճիներ գիշերուան գա-
լուստը կ'օգտուէին իրենց ճգաժէ կանչելով :
Մարա կրքով մը բազուկները պարսեց երկ-
տասարկին լղին շուրջ , եւ անոր գեղեցիկ
գլուխը իրեն քաշելով շրթունքները փակցուց
թմբին :

Այդ համարոյրը սակայն սթափեցուց Սիր-
զանն : Զգաց սխալը՝ որուն մէջ ինկած էր ,
ալիք առկա բերաւ իր ու իր կուրծքին առկ
նշուած այդ ուղջկան գիրքը , եւ ընդոտտ
լսարժանով մը ետ նետուեցաւ՝ իրր թէ կատր
մը կրակի հզանքը ընդունած ըլլար :

— Հո՛ւ, աւելի մօտ, կանչեց Մարիա՝
առանց դժպուտ երիտասարդին հեռանալը :

Յետոյ, աղուն վարտնքին վրայ, կէս մը
վեր բարձրացուց իր հեւ քսա կուրծքը, եւ
երկասարկը իրմէ հեռու տեսնելով յարեց.

— Ук'рго , хн'и , јид мому :

Զուր տեղը սակայն այդ. կոչն ալ : Սըր-
բազդընի տան գաղափարը կրկին խոռոված էր
աղան հոգին, եւ ա՛լ աշխարհի մէջ ոչ մէկ բան
պիտի կրնար այդ մտածումը հեռացնել իրմէ :

— Սե'րգօ, ինչո՞ւ չես գար, հարցուց աղ-
ջկը գրեթէ դժգոհ կերպով մը :

— Զըլլա՛ր Մարիա . . . դուն տանուտի-
րոյ աղջիկն ես , եւ Սերգո՛ չի կրնար սրբա-
պնդծ մը ըլլալ :

— Բայց ե՛ս կը հրամայեմ քեզի որ դաս :

— Ջրլա՛ր Մարիա, հրլար . . .

— Սկ'րդօ, եկուր Կ'սքեմ:

— Ո՛չ, Մարիա, Սերգեյ չի կրնար սրբապիղծ մը բլլալ :

Տղամարդը սկսում հեռանալ, սարէն իջնելու հաստատ մատգրու թեալ մը :

— Սե'րգօ , գոռաց Մարիա նորէն :

Ու որքան վախճանող վազրի վայրագ ուս-
առնով մը նետունեցաւ երիտասարդ հօտադին
վրայ, բռնեց անոր թեւերէն եւ սկսաւ դէպ
ի ժայռ քաշել:

Սերգիօ ընդդիմացաւ, ու կատաղի կռիւ
մը ծայր տուաւ երկուեքին միջեւ, գիշերնա-
մուտի սոյգ պահուն՝ ուր ամէն բան խաղաղ
էր չորս դին։ Բիրտ, ամենի կռիւ մըն էր
ոխտածը. տարիներու ասուլիւթեանմբ ուռած
երկու էսուկներ կարծես՝ սորենք յանկարծակաւ
հանդիպան մը մէջ իրենց մըէփնդրութեան

հայիր կը մաքրէին այդ լերան կատարը :

կոխը ամբողջ վայրկեաններ անեց : Մա-
րիա՝ որուն վրան գլուխը բզբառուած էր վե-
րէն վար , եւ որուն երկու արիւնջուայ ծի-
ծերը ամբողջովին դուրս ինկած էին պատռ-
տած բաձկոնէն , վայրի թափով մը գրկած
էր երիտասարդին վիզը ու չէր թողուր որ
մեկնի : Սերգո՝ առաջին անգամն էր որ այդ
աստիճան կորովի յարձակման մը կ'ենթարկ-
ուէր : Ծործորներու եզերքը , շատ հեղ ամե-
հի՝ օձերու դիմագրաւած էր ու միակ ձեռքովը
կրցած էր կլմինտրի կտորի մը պէս տափակ-
ցնել անոնց գլուխը , Զորերուն մէջ բազմա-
թիւ անգամներ գայլերու հետ կռուած էր ,
անօթու թնէէ կատուած գայլեր՝ զորս սակայն
կատուի ձողերու պէս խեղդած էր առանց
ո՛ր եւ է ճիգի մը : Օր մը , գիւղին հրապա-
րակին վրայ , փախստական ցուլի մը կոռոշին
կառչելով կեցուցած էր զայն իր կատաղի
վազքին մէջ , Բոլոր ատունք տղու խողեր եւ-
րեւցած էին իրեն , բայց այս անգամ , ինքն ալ
չէր հասկնաք թէ ինչո՛ւ այդ աստիճան ծանր
ու անընկճելի կուգար իրեն Մարիայի յարձա-
կումը՝ որուն գաղափարը ուրիշ ատեն թե-
րեւս հեզնական ժպիտ մը վառէր չրթունք-
ներուն վրայ : Տղամարդ մը որ աղջկան մը
չկարենայ դիմադրուե՛լ . . . ասիկա ալ սը-
բապղծութիւն մը չէ՞ր իր կարգին : Ո՞-
ճիր մը՝ գործուած ուղղակի ընտրեան ամե-
հէն նուիրական մէկ կանոնին դէմ : Գիւղին
մէջ , այդ կանոնը նուիրական աւանդութեան
մը պէս յարգուած էր միշտ , եւ , այն տղա-
մարդը որ կռուի պահուն զգեամուած էր
աղջիկէ մը , միշտ պարտաւորուած էր կամ
ինք իր ձեռքով վերջ տալ իր կեանքին , եւ
կամ իր ամօթը շալկելով հեռանալ համայնքէ
մը՝ ուրանկէ վերջ ոչ ոք մարդու աչքով
պիտի նայէր իրեն :

Այդ ամօթի զգացումը ուրիշ ամէն մտածում խեղդեց Սեբոբի մաքին մէջ, Դիմացինը ա'ւ իր ասնուստիւթ աղջկիկը չէր, այլ պարզ էր մը՝ ուրուն ընաւ թոյլ չպիտի տար յաղթել իր արուի կորովին:

— Մա'րիա, գոռաց պահ մը ամենի ձայնով մը՝ որ մինչեւ հեռուները արձագանդ տուաւ, Մա'րիա ձգէ վիզս :

Աղջիկը իր յուզմունքին ու կատաղութեան մէջ չկրցաւ պատասխանել : Ընդհակառակը ա՛լ աւելի ուժով մը բազուկները պրկեց հօտաղին վզին շուրջը :

Ան ասան՝ Սերգօ առիւծի ցնցումով մը թոթուեց կուրծքն ի վար կախուած այդ անուշ բնոր, եւ վայրագ հարուածով մը զգեստեց զայն : Յետոյ, մինչդեռ աղջիկը կրկին վազրի յարձակում մը կը փորձէր, իր հուժկու ափը փակցուց անոր մէջքին, եւ յաղթական աղաղակ մը արձակելով, բրտօրէն նետեց զայն իրմէ քանի մը քալ անդին :

Մարիա յաղթուած էր : Կռուող մը՝ որուն կռնակը անգամ մը գետինը համարած է, ա՛լ չի կրնար շարունակել : Յուսահատի յորդ լաց մը սկսաւ ժայթել աչուրներէն, արցունքները աւազի հատիկներու պէս քարացած դուրս կ'իյնային կապիճներէն, եւ այդպէս կը սահէին սյուներն ի վար՝ որոնց վրայ տեղ տեղ աղուն եղունգները իրենց հետքը թողած էին արիւնստ ծիրերով :

Հինգ վայրկեան մը անցաւ այդպէս : Հօտաղը, իր կարգին բաւական խոշտանգուած, գացած էր հանգչիլ ժայռի մը վրայ, մտածկոտ աչուրները գամած հորիզոնին ալքերուն՝ զորս մութը գրկած էր ամբողջովին : Մարիա ելաւ ինկած տեղէն, վրէժխնդիր նայուածքով մը դէպի տղամարդը դարձաւ, ու գուռաց գիշերուան մթութեան մէջ :

— Սերգօ, սէրս չառ մեծ էր քեզի համար, բայց վրէժս աւելի մեծ պիտի ըլլայ :

Յետոյ, հովի մը արագութեամբ սարն ի վար սուրալով, ձիուն վրայ ցատկեց եւ քառատրոփ ձեռք առաւ գիւղին ճամբան :

Հօտաղը ուշադրութիւն անգամ չէր ընծայած իրեն :

(Մ'նացեալը յաջորդ թուով)

ՄԷԲՍԷՏԷՍ

Օրհնութեան կոնգակ մը զրկեց Ս. Պատրիարք Հայրը Պ. Աղեքսանդր Մանթաշեանի որ ինչպէս յայտնի է՝ 20,000 ոսկի նուիրած է Բարիգի մէջ հայ եկեղեցիի մը շինութեան համար : Միեւնոյն ատեն, Ն. Սրբազնութիւնը գիր մը ուղղեց Բարիգի Հայոց հոգեւոր հովիւ Տ. Վառձապուն քահանային, յանձնարարելով որ կառուցուելիք եկեղեցիին հիմնարկէքը կատարուի Հայ եկեղեցիի ատանութեանց համաձայն :

ԻՄ ԿԵԱՆՔՍ(*)

Գալլս չեմ յիշեր. լալս չեմ մոռնար, — Լացը զոր պիտի յաւիտեան ես լամ — երբ մայրս բոլուց զիս մինակ, զքնաց Մօրք փոխկը հանգչիլ Իւսկիւսար :

Գլուխը բարձիւն վրայ զիս աշխարհ բերաւ, Սիրք բարի՛ն ցալ կաք ցըւաւ ինձի, Ոսքը փութիմ վրայ քալեց ինձի հետ, եւ իրմէն ներմակ մագով բոլուց զիս ... :

Սաղմոսը գիրքն եր. ու սաղմը գիրկը, Սաղմը մաղծ եղած, մեխամաղձութիւն, Սաղմը մըսածում, մըսասանջութիւն Մարդոց նըսենի՛ն՝ վախճանին համար :

Մե՛կ երե կարդար, երկո՛ւք կը նայեր. Նե՛ս մը Պօղոսին ու նե՛ս մ'եղիային. Զո՛յգ նետուածք աչի՛ր ուր պարպուեր իր սիր, Սիրքն ըզգայո՛ւն որ հիւծաւ այնքան շուտ ... :

Պօղոսը վարդ մ'եր, ես ագուա՛ւ անբեւ, Որուն քե՛ւ բուսաւ եւ մեծցաւ այնքան Մինչ զի անդընդոց վերե՛լին իշա՛յ վար, Ու զիս կորսնցուց հե՛գ մայրս իր աչիքն ... :

Վարդագե՛ղ բոյնի՛ն՝ անպարագրելի՛ Շրջանակ մ'եղայ սե՛ւ՝ խաւարակուռ, Զոր կ'ասղացուներ հոծ արսու՛նք մօրս. Անդունդիս լոյսե՛րն եղան այդ արսու՛նք ... :

Վայրեջքս ի խոր վիհն այնքան շենդոս եր, Զի լոյսն ետեւս հագիւ կը հասներ. Այլ մի՛տս կը հասներ, զի մօրե՛ս կուգար, Զի սրբիս սընունդն ա՛յն պիտի ըլլար .

Ծ. Խ. — Մայիսի 26 քիւով հրատարակած էրք եղիա Տեմբրիպաշեանի արձակ մեկ քանապոստիւքները, որուն ձեռագիրը խմբագրութեան քով կը մնար այն քուականէն ուր Գրասէր-Ատոմ վար դրա գրիւն Սյս անգամ ալ, նոյն հաճոյքը պատճառելու համար մեր ընթերցողներուն, կը հրատարակենք Տեմբրիպաշեանի մեկ ոտանաւորը, 1901 Մայիս 1 ին գրուած, դարձեալ Հիւանդանոցին մէջ :

Այն արտաւանգ, այո՛, ու ուրիշ արցունքներ
Գրեթե մանկեմ, Գանգեսին ծոցեմ .

Սովասանը ձագունցն համար՝ ո՛հ՝ լեարդը
Պատած լուսնաւուն աքա՛ծ աչքերեմ :

Այսպէս սրնայ ես, այսպէս ապրեցայ,
Այսպէս իջայ ես, այսպէս բարձրացայ,
Խորամըխուելով ալբերն երկրեան՝
Արտաւանց սակ ոյ՛ հացս, իմ բաղդս եղան...:

8 Մայիս 1901

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ազգ. Հիւանդանոց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ (*)

Ե Ի

ՋԱՆԱՋԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՈՒ ՈՃԵՐ

— 3 —

Ա..

Այ խաղը խաղացիր, ճանճիներ մնաց :

Այ կալ ունիս կասելու, ալ կորեկ ունիս
հոսելու :

Այ հոն է մօտիկ զրացին՝ քան զհեռուն :

Այլու փոխած կըլմանի : (Այլ ըսուած սղին
լիւր թէ երախան կը տանի, եւ անոր
տեղ կը դնէ եղեր տղեղ արարած մը,
այս պատճառաւ տղեղ մարդուն կըսեն .

«Այլու փոխածին կը նմանի» :)

Այն ա՛յս մի ըսեր, թշնամին կը լսէ օ՛յս
կըսէ :

Այն ա՛յս մի ըսեր, ի՛նչ ա՛յս է, ախը դռնէն
կախէ :

Այլը գիտէ զրանը վախը :

Այն իմ մատս տարայ, իմ աչքս հանեցի :

Այն տանձ մը իյնար՝ բայց կոթը վեր :

Այլուը ծուռ է, կովը կաթ չի տար : (Տես
նաեւ՝ Բակը . . .) :

Այլուը՝ մութ, ձին՝ սեւ, ես քերանքը ո՛ւր
քուտ :

Այլուին ֆօշեմ պառկեր՝ Ս. Գէորգը երանք
կը տեսնէ :

Աձան հաւը կառկըջան կ'ըլլայ : Կաւ՝ Ածուկ

հաւը կականան կ'ըլնի : Կաւ՝ Ածական
հաւը կոկոսան կ'ըլլայ : Կաւ՝ Կոկոսան
հաւը ածական կ'ըլլայ : (Գործողը խօսող
կ'ըլլայ միշտ) :

Ածելի բռնել չես գիտեր, քրտաշը իմ զո՛ւլս
պիտի սովորիս :

Ածելի կը լիզէ : (Շատ քաջ է) :

Ածերդ գնաց : (Բարկութիւնը անցաւ) :

Ածուի պատին վրայ կը կենայ : (Անվախ է) :

Ականջդ որո՞ւ փրայի տուեր ես :

Ականջը անոր համար չի մեծնար, վասն զի
շատ բան կը լսէ : Կաւ՝ Ականջը ի՛նչպէս
չի մեծանում որ շատ բան ա լսում :

Ականջը ծակ է : (Արթուն մեկն է) :

Ականջը կախ է, սիրան ուրախ է : (Անհոգ
ու անտարբեր մեկն է) :

Ականջիդ ջուրի ձա՛յն կուգայ : Կաւ՝ Ական-
ջիս ջուրի ձա՛յն կուգայ :

Ականջիդ բամբակը հանէ :

Ականջիդ քուն կ'ըլլաս : Կաւ՝ ալանջին քուն
կ'ըլլայ :

Ականջիդ օղ ըլլան ըսածներս :

Ականջի լսածը ուրիշ ա, աչքի տեսածը ու-
րիշ :

Ականջ կախէ խօսքերուն :

Ականջովը իձան չի արժեր : (Անարժեք մեկն է) :

Ակաւ՝ մակաս, էս էր պակաս :

Ակուպ ո՛ւր տեղ որ ցաւի, լեզուդ հոն տեղ
կը զարնէ :

Ակուայ ալուայի վրայ դրած համբերեցի :

Ակուայէս կը կտրեմ՝ կ'ուռեցնեմ :

Ակուայ կը կծրաւ, բայց ի՛նչ ընէ :

Ակուայ չի կրնար կարեցնելու :

Ակուայ պըչխելով փոր չի կշտանար :

Ակուան թափած է :

Ակուան թափած է, կը հաչէ, չի կրնար խած-
նել :

Ակուան արիւն է հասեր : (Անոր կ'ըսուի, որ
սեղ մը շահ գտնելով կը սխալ միշտ հոն
յանախել) :

Ակուան՝ փորին մէջն է :

Ակուին ծուռ թիւնը անվարձ կզէն կ'ըլլայ : (Տես
նաեւ՝ Ծեր եղան . . .) :

Ահա փխսիկը, ո՛ւր է մոկը :

Ահը՝ էլը ձիէն վազուկ կընէ :

Աշալիք կորկտա ունի : (Տեսնալիք գործ ունի) :

(*) Շարունակութիւն թիւ 24 Մասնակին

Աղան՝ աղնոց , խաթունը աղնոց :
Աղան որ ձէթ տայ , գոգդ դէմ արա :
Աղ առէ՛ք կ'ըսուի , աղջիկ առէ՛ք չըսուիր :
Աղբեր աղբնոց , երկու ձեռը ծոց :

(Շարունակելի)

Կարգադրեց
ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱԼԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ. — Ախ = աղիս, ախլակ, կղպակ, բիլիս,
սիւրիկ, Պըշիսել = փորել, խառնշտկել : Աղնոց =
աղաման :

ԱՅՏԸՆԵԱՆԻ ՀՈԴԵՀԱՆԴԻՍՏԸ

Պոլսահայ մամուլին կողմէ Այտընեան Աբ-
բահօր յիշատակին նուիրուած ցաւի ու մե-
ծարանքի արտայայտութենէն հետքը , նոյն
արտայայտութիւնը եղաւ նաեւ եկեղեցական
արարողութեան առթիւ որ կատարուեցաւ
կիրակի օրը , Բերայի Ս. Յովհան Ոսկերեան
եկեղեցին , ուր հոգեհանգստեան Պատարագ
եւ Պաշտօն մատուցուեցան : Պատարագին էր
Թէրզեան Գերապաժառ եւ արարողութեանց
կը նախագահէր Հայ-Հռոմէականաց Ս. Պատ-
րիարքը : Տաճարը համակ ծածկուած էր սեւ
չլարչներով , եւ սեւապատ սիւններուն վրայ
կերեւային հանգուցեալին՝ անուան սկզբնա-
տառերը , Ա. Ա. : Ներկայ էին Պապական
նուիրակին ներկայացուցիչը , Մեղքիդ, Սուր-
եանի եւ Քաղդէացի Պատր. Փօխանորդները ,
Անտոնեանց վանահայրը , Վենետիկի ու Վի-
էննայի Միսիթարեան միաբանները , եւ ուրիշ
բազմաթիւ կրօնաւորներ : Մեր Ս. Պատրիարք
Հօր ներկայացուցիչներն էին՝ Տ. Բաբգէն , Տ.
Գնէլ եւ Տ. Գրիգորիս վարդապետները որոնք
դասին մէջ կեցած էին վեղարաւոր , Իսկ
կղերականներուն ետին՝ աւսարիական դեռ-
պանատան պատուիրակ Պ. Պէլինսքի , Հայ
Հռոմէական երեւելիներ , Պատրիարքարանի
Ա. գործակատար Տիգրան էֆ. Տէր-Ներսէս-
եան , Բողոքականաց Ազգապետը՝ Բրօֆ. Յ.
Ճէճիգեանի , Բրօֆ. Ա. Տէր-Յակոբեանի եւ Ար-
շակ էֆ. Շմաւոնեանի հետ , Ուսումնական
Խորհուրդի առնւապետ Տօքթ. Թորգոմեան
էֆ.՝ իր երկու պաշտօնակիցներով , Թէթէս
էֆ. Պէրպէրեան , Մկրտիչ էֆ. Աճէմեան ,

Գրիգոր էֆ. Գարակէօզեան , Տիրան էֆ. Ք.
լէկեան , Գէորգ էֆ. Թորգոմեան , լրագրա-
պետներ եւ այլն : Երկուս ժողովրդեան
ստուար բազմութիւն մը լեցուած էր ամբող-
կեկեղեցին որուն դռանէն՝ հրաւիրեալները
ընդունուելով հիւրընկալ երիտասարդներու
կողմէ , մեծ մասը Այտընեանի աշակերանի ,
ներս կ'առաջնորդուէին :

Պատարագէն եւ հոգեհանգստեան Պա-
տօնէն հետք , հակիրճ դամբանական մը խո-
սեցաւ Հ. Նիկողայոս վրդ. Պաղչեան , Ոսկե-
բերան եկեղեցիին մեծաւորը : Յետոյ , ներ-
կաները մօտենալով հանգուցելոյն եղբօր Գէ-
որգ էֆ. Այտընեանի ինչպէս նաեւ Վիէնա-
կան Միսիթարեանց ներկայացուցիչ՝ Հ. Մելի-
Գաֆթեանեան , Հ. Գալէմքեարեան եւ Հ. Մէ-
նէվիչեան վարդապետներուն որոնք սգակի-
կեցած էին դասին մէջ , իրենց ցաւակցու-
թիւնները յայտնեցին :

Տ. Պօղոս Էմմանուէլեան Կ.-Պատրիարքը
շարականներու երգեցողութեամբ եկեղեցոյ
բակը առաջնորդուեցաւ ուր բարեմաղթութիւն
ներ ըրաւ Վեհ. Սուրբանին կենացը : Յետոյ
հիւրանոց ելաւ ուր ներկաներէն շատեր , մա-
նաւորապէս պաշտօնական ներկայացուցիչ
ները , կրկին անգամ ցաւակցութիւն յայտ-
նեցին :

Այս կերպով աւարտեցաւ կիրակի օրուան
հոգեհանգիստը որ՝ եկեղեցական արարողու-
թիւն մը ըլլալով հանդերձ՝ համակրանքի ու
սիրոյ վերջին ողջոյն մըն էր հայ համայնքին
կողմէ անխորի , մասնաւորապէս մաքի ու
գրչի աշխատաւորներուն կողմէ՝ զէպի մաքի
ու գրչի մեծ վաստակաւորը :

§ Այտընեան Աբբահօր յուղարկւորութիւն
ու թաղումը կատարուեր են անցեալ ուրբա-
թի , Վիէննայի մէջ :

§ Բանկալթիի վանատան մեծաւոր Հ. Գրի-
գորիս Վ. Գալէմքեարեան եւ վերատեսուչ
Հ. Գարրիէլ Վ. Մէնէվիչեան Ս. Պատրիարք
Հօր բնակարանը երթալով , շնորհակալութիւն
յայտնեցին՝ Այտընեան Աբբահօր հոգեհանգստե-
ան ներկայ գտնուելու համար պատուիրա-
կութիւն մը զրկելուն :

ԿԻԼԻԿԵԱՆ ՅՈՒԹՔԵՐ

ԽՕՍՆԱԿԻՆ ՔՆԱՐԱՆԸ

Հոն մայիսէն կը սկսի հովոցքի չուն, եղա-
նակներու էն անուշ միջոցին ուր ամէն թըռ-
չուն ճկլուն երգ մը ունի իր բերանը, ու
ամէն սիրտ սիրոյ տունդոտ տրոփիւն մը իր
մէջ՝ նետուելու ծոցը բնութեան, որ իր
սրբին աստուածագիր գիրքը բացած՝ անհուն
ու գոյալուն էջեր ցոյց կուտայ:

Ա՛հ, ի՛նչ ալ գիւթիչ ու թովիչ են պէս-
պիտանքները անոր երեւոյթներուն, որ աչ-
քերդ կը պարարեն, սրտիդ սէր զգացունեն-
րուն կուտան աշխոյժի թեւն ու թռիչքը,
մտքիդ հիացում, ու հեշտին հմայք մը հո-
գիւրդ:

Տարսոնցիներուն սիրած հովոցքն է Լամ-
բրանը, ուր բարձրանալու համար մարդ չըզ-
գար բնաւ ոչ մարմնի խոնջէնքը, ոչ ալ ճամ-
բաւ տաժանքը: Հոն, Լամբրոնի ճամբան,
մանաւանդ մայիսի եղանակին, ամէն ինչ ոտը
կենքը ու ծիծղուն ժպիտ մը ունի. դաշտե-
րու լանջքն, բլրոց կողքերէն, պուրակնե-
րու գոգէն, ծորձորներու ու ծմակներու ծո-
ցէն կը խնկէ բնութիւնը իր սրտի բուրվառով
նշխարկան ծաղկներու բուրումները զգլխիչ,
որոնց շատերուն կուսութիւնը դեռ մարդկա-
յին ձեւքեր չեն եղծած:

Քանի վե՛ր վե՛ր բարձրանաս եզերելով
դալարագեղ ափունքը Կիւանոսին, տեսա-
րաններու պէսպիսութիւններն ալ այնքա՛ն
հրապուրիչ ու գեղեցիկ կը դառնան:

Քէչպիւքիւնի լեռնակին ցցուն ուսին
վրայէն չես յազենար դիտելով Միջերկրականի
ափունքը եւ Տարսոնի դաշտօրայքը հասկա-
լութի, ուսկից դարձեալ Կիւանայ Կիւանոս
իր մոլեգին վաղքովն օդակ օդակ, եւ երկա-
րածիդ կապոյտ մապաւէնի մը պէս ծալ ծալ
ու վէտվէտուն:

Կիլիկիոյ նշանաւոր դետերէն է Կիւանոս:
Քիտութիւնը երկաթէ մարտկուռ գօտի մըն է
կապիր իրեն, որուն վրայէն սուր ձիչով մը

սուրալով կ'անցնի չոգեկառքը չոգեպինդ՝
իր սեւ գալարուն գիծերուն վրայէն՝ Մէրսինէն
դէպ ի Ատանա: Ո՛րքան ալ սակայն ուրախ
են չրջակայ գիւղացիք, տեսնելով այս ան-
կենդան կենդանին որ մէկ շունչով կը փոխադ-
րէ իրենց դաշտին բերքերը Ատանայէն Տար-
սոն, Տարսոնէն Մէրսին, մինչեւ ծովեզերք:

Լամբրոնի հովոցքը հասնելու համար՝ վեց
ժամուան համբերանքը բաւ է. տեղացիները
սովոր են առատան արշալոյսին կամ իրկուան
կաթ լուսովը լուսնակին ճամբայ ելլել: Լամբ-
րոնի չորս բուրքը պար են բռնած կարկառ
լեռներ՝ ցցուն կատարներով՝ որոնք մայրի ծա-
ռով են ծածկուեր, ու քչիկ մըն ալ հեռուն, դէպ
ի հիւսիս, հսկայ բարձունքները լեռնաշղթային
որոնք ցուրտ ձիւնոտ բազուկներով գրկած
անծիր հորիզոններ, սառ չրթներով պաշիկ-
ների կուտան կարծես երկնի կապուտին:

Լամբրոնի բարձրաւանդակը որ սարահար-
թի մը վրայ հսկայի մը պէս յոտին կանգնած՝
կը դիտէ աջն ու ձախը, պատկառոտ սուգա-
ւորութիւն մը կը թողու: Հետզհետէ քա-
նի միւրճիւ լեռնալիքներու ծոցը, կը տես-
նուին բարձրաւանդակին կողերն ի վար ու
վեր շարան շարան ցանցնուած այգեստաննե-
րը որոնց անուշակ ողկոյզները կը ցուցադ-
րուին սարփինաներու թաթիկներուն վրայ,
եւ ածու ածու մրգաստանք եզերուած կ'երե-
ւան խնկաբոյր փշաթխներով:

Լամբրոնի հովոցքին հանդէպ ամէնէն ա-
ռաջ աչքիդ կը դալի կիսափուլ ու անշուք
մատուռի մը գմբեթը, որուն մամուռապատ որ-
մներուն վրայ չես դիտեր թէ՛ ո՛ւսկից եկեր
բուսեր են փչոտ մացառներն ու գորշ կնձի-
ները, մոլոչներն ու մեղրուկները, մանաւանդ
խաչալեզուակ հարսնուկները փունջ փունջ,
որոնք անոր անշքութիւնը պճնապարզելու
երեւոյթն ունին: Տարսոնի խօսնակին քնա-
րանն է այս, Սիւեւայի մնաստանը, որ
եղած էր միանգամայն անոր սնարանը հոգե-
պէս: Մատուռին մօտիկն ու հեռուն հազար
ու մէկ աղբիւրներ գո՛ւլ գո՛ւլ կը վազեն,
մէկը ցայտելով մերկ ժայռի մը կողէն, ուրիշ-
ներն այլ եւ այլ ձերպիւրէն, ու քիչ մը ան-
դին առուակներ ձեւացած քաղցրակարկաչ
խոխոջանքներով կարծես անմահութեան մե-

ղեղինները կը հիւսեն խօսնակին յաւիտենական քնարանին շուրջը :

Սկեւռայի արեւելակողմը կիյնայ Սաղուանապատը , ուր ստէպ կը քաշուէր Տարսնի խօսնակը , բայց Լամբրոնոցիին աւելի սիրած վանքն էր Սկեւռան , զոր իր հայրը չինել տուած էր , որուն վանահայրն եղաւ ու միանգամայն Տարսնի Արքեպիսկոպոսը : Դեռ իր քարոզած եկեղեցին կանգուն կը մնայ Տարսնի մէջ , որուն խնկարոյր կամարները որքա՛ն արձագանգներ են տուած հայ ոսկերեւանին հոգեւոր սիրոյ քարոզներուն :

Ներսէս Լամբրոնոցիին պերճախօս քարոզչի համարը՝ նախանձն էր շարժեր կարգ մը համայնքներու որոնք նորասէր ու հերձուածող կ'ամբաստանէին զայն : Բայց Տարսնի խօսնակը , որ խօսքին չափ գրիչ ու թռիչ ալ ունէր , պատասխանեց զինքը յանկրաւի զրախօսողներուն :

Թէեւ այժմ Լամբրոնի բարձրաւանդակին հանդէպ կիսափուլ ու անշուք կ'երեւայ անոր քնարանը , բայց չէ դադրած ուխտասեղի մը ըլլալէ Տարսնցիներուն : Որքա՛ն ուրախաթիթ պիտի ըլլար աեանել նորոգուած այդ հինաւուրց մենաստանը , քնարանը մեր երանաշնորհ խօսնակին :

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՍԻՐԵՐԳՆԵՐՈՒ ԶՈՒՐՋԸ



Թիւ 21 Մասիսի մէջ հրատարակուած ժողովրդային սիրերգի նմոյշներու առթիւ , Սմբատ Դաւթեանի «Ժողովուրդին Գնարը» վերնագրով մէկ յօդուածը (*) կը ստիպէ զիս որ թիւրիմացութիւններու տեղի չտալու համար՝ քանի մը բացատրութիւններ տամ , Դժբաղդաբար «չառ գեղեցիկ անակնկալ մը» չպիտի կրնամ պատճառել յօգուածագրին , յայտնելով թէ՛ հրատարակած Անսոնիներու նման գրական գոհարներ առաջ չեն դար կարնոյ՝ ժողովրդային գրականութեան աեօակէտով անբերրի հողին վրայ . նմանապէս ուրիշ ու եւ է գաւառ ալ — ցաւ է ըսել — չի կրնար

(*) «Մասիս», Թիւ 22 .

մրցիլ Ակնայ հետ՝ ժողովրդային բանաստեղծութիւններու ընտիր արտագրութիւններով : Հրատարակած Անսոնիներս , եւ ուրիշ շատեր ալ , թիւով մօտաւորապէս 30—35 հատ , որոնք հետզհետէ պիտի հրատարակուին Մասիսի մէջ , հաւաքած եւմ Ակնէն ու չրջականերէն Ապուշեկէն ու Վանքէն (Յունադաւան Հայրու գիւղ մը) , Սանասարեանէ չրջանաւարտ ըլլալէս ետքը , ծննդավայրիս մէջ անցուցած արձակուրդի կարճատեւ ժամանակավիճակ մէջ :

Գիտէի հաւաքածներուս մասամբ լոյս տեսած ըլլալը , իմացած ըլլալով ողբացեալ Յ. Ճանիկեանի հրատարակած «Հնութիւնք Ակնայ» , — զոր ձեռքի տակ ունեցած չեմ դժբաղդաբար , անոր պակասներուն ու թիւութիւններուն մասին զիտողութիւններ կարենալ յայտնելու համար , որովհետեւ կան հոն պակասներ՝ արտատպուած օրինակներէն դատելով , — եւ դարձեալ այն յայտնութիւնէն զոր ըրաւ օր մը հանգուցեալին կինը ընտանեկան հաւաքոյթի մը մէջ :

Կը պահանջուի որ բացատրեմ թէ ինչ կը նշանակէ Անսոնի . գուցէ չկրնամ լիովն տալ այդ բառին ճիշդ սահմանը : Ս. Դաւթեան կը կարծէ (*) թէ այդ բառը կը նշանակէ անյանգ ոտանաւոր . սակայն այս սահմանը ճիշդ չի թուիր , սա գերազանց պատճառով որ Անսոնին անյանգ չէ : Անսոնի թերեւս նշանակէ ոչ-անաւոր ոտանաւոր : Անսոնիները՝ որոնք առհասարակ յանգաւոր են , բայց երբեմն չունին որոշ անդամատութիւն , արմէնքն ալ , երգի վերածուած սիրալէպիկներ են , գերազանցօրէն սրտաշարժ , յանկուցիչ , ու բանաստեղծական շնորհագրութիւնով մը օժտուած , այնպէս որ անդիմադրելիօրէն կը գերեն , կը մոգեն ընթերցողը անոր միտքին վրայ անջնջելի , անուշ ու քնքուշ տպաւորութիւն մը գործելով :

Անսոնիները , նմանապէս միւս բոլոր խաղ , հարէն , ալէ-կէօղլիւ , լաց , «է» (**) կոչուած երգերը , — որոնցմէ իւրաքանչիւրէն

(*) «Պատկեր աշխարհիկ գրականութեան» էջ 34 .

(**) Օրերգ որ իր անունը առած է՝ երգուելու ժամանակ , ամէն տունի վերջը «է» ձայնաւորին վրայ ելեկող դաշն ու քաշ ձայնէն :

ալ ընտրելագոյն օրինակներ կարգաւ հա-
ձորը պիտի աւամ Մասիսի ընթերցողնե-
րուն, — թէեւ իրաւ է թէ լեզուի տեսա-
կէտով ալ շնորհէ ու հրապոյրէ զուրկ չեն,
տակայն անոնց մէջ գտնուող գաւառական
ինչ ինչ բոլորովին խորթ արտասանութեամբ
բառեր կրնան նուազեցնել ոչ-Ակնեցի ըն-
թերցողին աչքին անոնց գրական արժէքը,
որովհետեւ չեմ կարծեր թէ հաճելի տպաւո-
րութիւն թողու ընթերցողին լսելիքին վրայ
օտնիլ (անցնիլ), կոյել (կոտրել), կըյել (կըտ-
րել), ճոշնալ (ճանչնալ), պօծառ (պայծառ),
աօձ (տանձ) եւ ուրիշ ասոնց նման բառեր,
որոնց գրական ձեւը, առանց ու եւ է անպա-
տեհութեան, կարելի է դարձածել՝ գրական
այդ դողարիկ պատառներուն քաղցրահնչու-
թիւնը խորթ արտասանութիւններով չաղար-
տելու համար: Մանաւանդ որ արտասան-
ուածին նման գրելէ ետքը, պէտք է բացա-
րութիւններ ալ առաւ, — բան մը որու մի-
ջոյն մարդ պիտի փորձուի նրբութիւններու
մէջ մտնել, ինչ որ բոլորովին դուրս է
Մասիսի նման գրական թերթի մը սահմա-
նէն: Ս. Դաւթեանի կարծիքով ալ ճիշտ այս
նկատմամբ էր որ պատշաճ դասեցի գրչի
թիւն հարուածներով սրբագրութիւններ կա-
տարել (թէեւ տեսարաններու մէջ նշանակա-
ծաւ այդ գաւառաբարբառին բոլոր նրբութիւն-
ներն ու երանգները), պահելով սակայն ամ-
փոքրամասն այն ձեւերը որոնք այնքան սիրուն
գեղեցկութիւն մը կուտան այդ բանաստեղ-
ծութիւններուն:

Սխալ է մեկնաւոր բառը փոխել միևնաւորի:
այս ձեւը կը գտնենք միևնաւորիկ բառին մէջ,
բայց առանձին կը գործածուի նաեւ մեկա-
ւոր: Ս. Դաւթեան իմ հրատարակած Ան-
աւանդներու վրայ աւել տեղ յաւելումներ ալ
ըրած է, զանոնք ամբողջացնելու գովելի
դիտումով, կրկնում ալ կարծած է առաւ անոնց
հարազատ ձեւերը, միայն թէ իմիջներս ա-
ւելի հարազատ ու մանաւանդ գեղեցիկ են,
ինչ որ վրիպած չի կրնար քլալ ուղղիւր ըն-
թերցողին աչքէն: արտատպուածները պէտք
է համարել հրատարակուածներուն վառնալի-
նիքը: Մասիսի թիւ 21ի Անտունիներէն
վեցերորդը միայն այդչափ ուղեցի հրատարա-

կել (թէեւ ամբողջութիւնը ես ալ ունէի,
միայն քանի մը աննշան տարբերութիւննե-
րով): Ես այդ քառատողին մէջ, սիրաբոր-
բերտասարդի մը կարմրայան աղջկան մը հետե-
լինալը (taquinerie) կը տեսնեմ, ուր չարա-
ճճի՝ պարմանին կ'ուղէ ցոյց առաւ թէ արհա-
մարհելի տեսարան մը չի ներկայացներ «կար-
միր կապաւոր աղուոր»ի մը շրջադիտութիւն
հովէն ծածանումը:

Դաւթեան էջի մէջ բերածն է որ պէտք
է վառնալի մը համարել, որմէ կը պակսի
հետադայ հատուածը՝ որուն վերջին չորս առ-
դերը հաճելի կերպով մը ցոյց կուտան թէ
ինչ մեծ ոգեւորութիւն առաջ կը բերէ պարի
մը մէջ գեղունիի մը ներկայութիւնը:

Աղուորն է ալ՝ ընդին նման
Ուր ոսկուն խէֆէն է դրած:
Աղուորն ուր պար երթայ՝
Պարը կու խնդայ:
Ան գէշն ուր պար երթայ՝
Պարը կ'երերայ:

Եօթներորդ տունին մէջ բնաւ սրբագրու-
թիւն եւայլն կատարուած չէ. ու դարձեալ
լաւ է որ նոյն տունին վերջին չորս տողերը
իրենց տեղը հանգիստ մնան, քանի որ իմաստի
ու ընականութեան տեսակէտով այնքան կը
պատշաճին հոն կենալու, քան վերջաբանը
կազմելու Յ. Ճանիկեանի երկէն արտատպ-
ուած «համակ ոսկեղբորուգ ու պատկերոտ
տեսարանին», որուն ամբողջութիւնը կ'արժէ
որ անգամ մըն ալ տպուի Մասիսի մէջ:
քանի որ Ճանիկեանէ արտատպուածը թերի
է, ու նաեւ անոր մէջ քանի մը տողեր ան-
հարկի տեղափոխութիւն մը կատարած են:

Ա Ն Տ Ո Ւ Ն Ի

Ես աս գիշեր դուրս ելայ,
Մութ գիշեր, չի կայ լուսնկայ:
Իմ ետքս ալ՝ վարէն ի վեր:
Ձեռքն ի կայ ոսկուն մաշալ:
Թեւէս բռնեց ներս տարաւ,
Դուռ դրաւ, ախիկն ի վրան:
Սփռեց սէրէսէր խալի
Ուր դորձած տասուերկու տարի:
Ձգեց խուշ թիւշի տօշակ
Սէրէսէր բարձերն ի վրան:
Սփռեց սէրէսէր ետթախ
Սևմարու վերմակն ի վրան,
Խուշ թիւշիւ բարձերն ի գլխուն:

Զարդարեց սկսուն սեղան ,
Հաւ խորված կաքուսին ի վրան՝
Շարեց ֆերֆուռու ֆինճան ,
Մէջն ի կայ նուան հատ գինի :
Սէրը սիրողին վայլէ ,
Աս գինին՝ անուշ խմողին ,
Խմէ ուր ըսիմ անուշ ,
Ես մէկզա բռնեմ քեզի նուշ ,
Անտուռնի մ'ըսեմ , ուշէ ուշ ,
Ինչեք անտուռնի մ'ըսեմ ,
Ուր թնայ խէտէհն ի ափիդ ,
Խէտէհն ի ափիդ թնայ ,
Սրմայ թեւ պոյուրդ երեւիդ . . . :

Չեմ ուզեր այլեւս սրբագրութիւններով զբաղիլ , մանաւանդ որ անոնք կրնան մեզ հեռացնել բուն նիւթէն . իմ նպատակս էր , եւ է , այդ պատասխանները որոնք անվիճելի կերպով գրական արժէք ունեցող գործերն են , զաւանական գրականութեան համակիր գրիչներու գնահատման յանձնել՝ ամէնէն աւելի գրական , բանաստեղծական արուեստի տեսակէտներով : Ահա այդ պատճառով այս անգամ ալ կուտամ նմոյշ մը «Ալէկէօզլիւ» կոչուած ռոմանաւորէն որուն մէջ ալ չեն պակսիր բանաստեղծական անըման գիւտեր ու պատկերներ :

Ուշադրութեան արժէք հետագայ տուները .

Աղւուրեա , քեզ պիւլպիւլի պէս մէթհ կ'անխմ տալին վրայ ,
Հագեր ես պէղազու զերպապ , կու վայլէ ալին վրայ .
Ելեր ես թէրան կու երթաս , բացեր ես լուս երեսդ ,
Քրտնըդ մարգարի նման շարուեր է լալին վրայ :

Պայրդ տեսայ՝ հէյրան եղայ , շատ անման տղւոր ես ,
Զիւնֆներդ թուր կու քաշէ կերտանիդ խալին վրայ .
Դուն գիտես որ աս տղեկը սիրուդ կրակն երեր է ,
Լուս երեսդ պագիկ մի տուր , շերպէթին պալին վրայ :

Սէրմի սիրեմ՝ ես'ը , քու սիրուդ , իմահ ու զարբոյ դուն ես .

Բենէ ի զատ ալ եար չունիմ , սիրական եարս դուն ես .
Զիւնֆներդ երեսդ ի վար կամար կապեր ամպի պէս ,
Ծոցդ է բացուեր վարդ ու ռահան , պահճէս ու պարբոյ դուն ես :

Այս գրական ափնիններուն մէջ պործածուած ոչ-հայ բառերուն ու գրաբարի ինչ ինչ ձեւերու մասին՝ որոնք «քաղաքացիութեան զիրք ստացած են» , պէտք է ըսել թէ՛ առաջինները կ'ապացուցանեն այդ ռոմանաւորներուն հետզհետէ կազմուած ըլլալը ու խաթարուելու սկսիլը միանգամայն , իսկ երկրորդները կը մասնաշնչեն անոնց պատկանելի հնութիւնը : Միայն անհրաժեշտ է աւելցնել

թէ այս գրաբարի ինչ ինչ ձեւերը բանաստեղծութիւններուն պատշաճ գեղեցկութիւն մը կուտան , առանց անոնց ապու ընթացնիկ կոչուած լեզուի մը երանդը :

Լեզուի տեսակէտով անոնք զլուսորտապ ուրիշ ուշադրութեան արժանի հանդամանք մըն ալ ունին . սակայն այս մասին ուրիշ ատթիւ :

Կարին

Վ. ԳՈՒՅՈՒՄԵԱՆ



(ՍԻՐԵՐԴ)

Նեմգութիւններուդ հիմայ որ գիտակեղծ եմ , ինչո՞ւ զիս միտ կը բովես ,
Երբ գեղաբնոր՝ կ'անցնիս իմ եովես .
Ինչո՞ւ , իմ հոգւոյս չհնալ հրեւակ :

* *

Դիւեր մը վարձան , երբ պատգամիս
Մէջ հասած էի , լուսինը վերեմ
Հծծեց ականցիս . — իր ժպիտներեմ
Նեմգանքապոյր , չըլլայ որ խաբուիս — :

Մայիսի առտուն . պարսեգը , մարգին
Վրայ մեղկօրեմ փռուած էի ես ,
Երբ ծաղիկներուն բերեմ վարդ վես ,
Քեզմէ գանգասներ բաւ իր կարգին :

Օր մըն ալ նորեմ , արեգակն , այցուն ,
Իր առջի շողերն ինձ զրկեց շիտակ ,
Պատմելու համար քէ նայուածքիդ ցակ ,
Նեմգոս ցովմունքներ պահուած կան քաղն :

Հեղ մ'ալ դաւեսն էի , երբոր արտոյսը
Մեղմով փախաց . — ո՞վ հե՛ պարմանի ,
Դիւե՞ս ի՛նչ անցուք է ան , ու քանի՛
Պատրոյ՝ աչքերուն խռովիչ կապոյսը — :

Ու կը կարծէի , աւա՛յ , այն ասեմ ,
Թե ծաղիկ , բոչուն , արեւ ու լուսին ,
Քու շրմոհներուդ նախանձովը սին ,
Կը չարախօսեմ բզկեղ , կը սրսեմ :

* *

Նեմգութիւններուդ հիմայ որ գիտակեղծ եմ , ինչո՞ւ նորեմ առջի պես
Մտիս իղծերուն վրայ կը տրեւ .
Ինչո՞ւ , քե՛՛ ինձ , չհնալ հրեւակ :

Վ.ԱՐԳԻՆ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Այցելուքիւն Հիւանդանոցին . — Ռուսիոյ Մարիա Գեորգիւնա Մայր Կայսրուհիին հո-
վանաւորութեան ներքեւ գտնուող բարեգոր-
ծական հաստատութեանց Հոգաբարձութեան
անդամ Պ. Վլատիմիր Տակէլցորոյ , որ օտար
բարեգործական հաստատութեանց ներքին
կազմակերպութիւնը ուսումնասիրելու պաշ-
տօն ունի եւ այս նպատակով Կ. Պոլիս եկած
է , երեքշաբթի օրը Շէտի-Գուլէի Յունաց
հիւանդանոցը այցելելէ ետքը , մեր Հիւան-
դանոցն ալ այցելեց՝ ընկերակցութեամբ իր
նշքօրտղիկան , ուսւ դեսպանատան թարգ-
մաններէն Պ. Եաքիմովի եւ Տօքթ. Լիմարա-
քիի ։ Պ. Վլատիմիր եւ իր հետեւորդները ար-
ժանալայկ կերպով ընդունուեցան Հիւան-
դանոցի Տնօրէնին , բժշկներուն եւ պաշտօ-
նէութեան կողմէ , ու մէկիկ մէկիկ պատե-
օն արանց եւ կանանց հիւանդարանները ,
լիմարանոցը , վիրաբուժական գործողութեանց
սրահ եւ միւս բաժինները ինչպէս նաեւ որ-
բաններուն աշխատանոցը ։ Պ. Վլատիմիր
մանրամասն տեղեկութիւններ հարցուց պա-
տաւարեալներէ թիւին , հիւանդանոցի երու-
մուտքին վրայ եւլն . զորս նօթագրեց իր յու-
շատուրին մէջ . միանգամայն ներքին կանո-
նադիր եւ վերջին տեղեկագիրէն օրինակ մը
առաւ , զորս ուսուիրէնի թարգմանել պիտի
տայ՝ ուսումնասիրելու համար ։ Ռուս այցե-
լուն մտրմարար տեսակցեցաւ զինքը ընդու-
նողներուն հետ եւ ըսաւ թէ ինք Լազարեան
ձեմարանին մէջ չափազերաւորութեան ուսուց-
չութիւն ըրած ըլլալով , քիչ մը հայերէն ալ
կը հասկնայ ։ Պ. Վլատիմիր եւ իրեն ընկե-
րացողները գոհունակ տպաւորութեան մը տակ
մեկնեցան Ս. Փրկչի Հիւանդանոցէն ։

Եւանդ երկսեռ վարժարանի տարեկան
վիճակացոյցներու բաշխումը կատարուեցաւ
նախօրէ չարթուն ։ Ներկայ էին՝ Բերայի քա-
րողի Տ. Հմայեակ Եպիսկ. , Թադ. Խորհուրդի
ու Հոգաբարձութեան ատենապետ Միքայել
էֆ. Մամիկոնեան իր անդամակիցներով եւ
ուսուցչական մարմինը , Տնօրէն Գրիգոր էֆ.
Մարգարեան բերանացի ամփոփ տեղե-

կութիւններ հաղորդեց դպրոցական վերջին
չրջանին մէջ այդ հաստատութեան ուսումնա-
կան ընդհանուր ուղղութեանը եւ արդիւնք-
ներու մասին որոնցմէ կը տեսնուէր թէ կրթա-
կան ծրագիրը ամբողջութեամբ եւ խնամով
գործադրուած ըլլալով . Էստեան վարժարանը
այս տարի ունեցած է 18 չրջանաւարտ աշա-
կերտուհի որոնք պիտի հետեւին լրացուցիչ
Ս. Դասընթացքի ուսմանց , Նոյնպէս մանչե-
րու բաժինին մէջ , յառաջիկայ չրջանին պի-
տի կազմուի բարձրագոյն դասընթացքի Բ.
տարին , որով Էստեան վարժարանը պիտի
ունենայ նախակրթութեան ամբողջական
չրջան մը ։

Ինչպէս յայտնի է , մայրաքաղաքիս թա-
ղային դպրոցներուն մէջ Էստեան վարժարանը
միակն է որ կը պարունակէ աղջիկներու յա-
տուկ երկու լրացուցիչ դասընթացքներ որոնց
կը հետեւին , Բերայիներէ զատ , հեռաւոր
թաղերէ եկող աշակերտուհիներ ալ ։ Տեսակ
մը մանկավարժական դասընթացք որուն հե-
տեւող օրիորդները՝ իրենց ուսուցիչներուն
հսկողութեան ներքեւ՝ իրր նախապատրաս-
տութիւն իրենց ընդգրկելիք ապագայ ասպա-
րէզին , գործնական փորձեր կը կատարեն՝
այլ եւ այլ ճիւղեր դասախօսելով օրական
1-2 ժամ ։

Երուսաղէմի Ս. Պատրիարք Հայրը , որուն
առողջական վիճակը բարւոքած ըլլալը գո-
հաւթեամբ կը տեղեկանանք , օգափոխութեան
համար Բեթլէհէմ գացեր է ։

Աւմաւի Դպրեւիւմէին վերադառնալ Դուր-
եան Սրբազան մայրաքաղաքս եկաւ՝ ամառ-
նային արձակուրդի առթիւ ։ Իրեն կընկերա-
նան նորընծայ միաբաններէն Մեսրոպ Վրդ.
եւ հինգ որբեր ։

Կիլիկիոյ Կաթողիկոսական բնօրւքեան
պատուիրակ Տ. Մովսէս կղպիկ . Կէօմրիւքեան
յառաջիկայ երկուշաբթի կամ երեքշաբթի կը
մեկնի Ատանա ։ Շարթուս մէջ յաճախի
այցելելով Պատրիարքարանի զիւանապետնը
ուսումնասիրեց ասկէ առաջ տեղի ունեցած
կաթողիկոսական ընտրութեանց առթիւ գոր-
ծադիր տեսուչներուն Պատրիարքարանի հետ
փոխանակած թղթակցութիւնները եւ այդ
մասին տրուած հրահանգները . Ուշադրութիւն

պիտի ըլլայ որ այս անգամ ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցող իւրաքանչիւր թեմ՝ փոխանակ ներկայացուցիչներ կարգելու Ատանայի մէջ, ուղղակի պատգամաւորներ զրկէ : Այս նպատակով, Պատրիարքաւորներ զրկեց Ատանայի, Հալէպի, Մարաշի եւ ուրիշ կուսակալութեանց՝ խնդրելով որ Բ. Դրան որոշման համաձայն՝ զիւրութիւն ընծայեն իրենց իրաւասութեան ներքեւ գտնուող գաւառներէն Ատանա զրկուելիք պատգամաւորներուն որոնք ըստ օրինի պիտի մասնակցին Ընտրողական Ժողովին գործառնութեանց :

Վիճակագրական քաղաածէ մը կերեւայ թէ ամբողջ Թուրքիոյ մէջ կը գտնուին 20 թեմակալ առաջնորդներ որոնց 10ը եպիսկոպոս, 4 թեմակալ վանահայրեր, 16 Պատրիարքանորդներ ու առաջն. տեղապահներ եւ 18 առաջն. փոխանորդներ :

Այլազովսիի յիշատակին մօտերս Բեդերսպուրիի մէջ լոյս պիտի տեսնէ երաժշտական-գեղարուեստական պատկերադարձ շքեղ ակադմի մը Պ. Պ. Գ. Օքրոյեանցի եւ Ե. Բաղդասարեանցի հրատարակութեամբ : Այդ ակադմի, ինչպէս կը կարդանք Արեւելի մէջ, պիտի լսվանդակէ լիակատար կենսագրութիւնը հանգուցեալ ծովանկարչին, ԺԹ. դարու նկարչութեան վիճակը Ռուսիոյ մէջ, հայ երաժշտութիւնը ԺԹ. դարուն, եւ յուշիկներ՝ երաժշտութեան անցեալէն ու ներկայէն : Նոյնպէս, կենսագրութիւնը ու լուսատիպ պատկերները՝ ԺԹ. դարուն մէջ ապրող կարգ մը երաժիշտներու եւ հեղինակներու :

Փուճը լրագիրը, կանոնի հակառակ վարուած ըլլալով, անպայման կերպով գաղարման դատապարտուեցաւ Տպագրական Տեսչութեան կողմէ :

Նրկու արաբաղղ երիտասարդներ, Վահան Մամասեան եւ Սարգիս Ֆերահեան, կիրակի օրը զոհ գացին քսամնելի ոճրի մը որուն մանրամասնութիւնները պատմուեցան օրաթերթերուն մէջ : Մարգասպանը, Մէհմէտ, ձերբակալուած է եւ նախնական հարցաքննութիւններն աւարտած ըլլալով, թուղթերն յանձնուած են դատական պաշտօնատան : Այս կրկնակ ոճրին շարժառիթն էր

գողութիւն, եւ հարագործը՝ խոյս տալու մար զինքը բռնողներուն ձեռքէն՝ զոյւնաւոր զարկած սպաննած էր զանոնք :

Երեքշաբթի օրը Եէնի-գարուի կեղեցիկ մէջ կատարուեցաւ երկու զոհերուն յուղարարութիւնը, խուռն բաղմութեան մը ներառութեան եւ նախագահութեամբ Տ. Վահան Մ. Վ. Յակոբեանի որ յուղիչ դամբանական մը արտասանեց, — Վահան Մամասեան էր ուսումը առած էր Պէրպէրեան վարժարանի մէջ, լաւ մեքենագէտ էր եւ վերջերս սեռաւորութեամբ կը զբաղէր : Դրչի տէր էր միանգամայն եւ Լոյս շաբաթաթերթին կալիտակցէր «Վէլ-Մէն» ու «Մօրուստր-Անմուտեկ» ծածկանուններով : Դեռ նոր ա. մուսնացած էր. հայրը կաթուածահար եղած է՝ զաւակին օրտաճմիկ մահուան գոյժը լսելով, իսկ մանկամարդ այրին՝ խելացնոր վիճակի մը ենթարկուած է : — Սարգիս Ֆերահեան կը թողու չորս դեռտաի որբեր :

Այրի Տիկին Արուսեակ Ա. Պետիկեան նա. մակ մը ուղղած է մեզ, Մաւիսի միջոցաւ իր խորին շնորհակալութիւնը յայտնելու համար ամէն անոնց որոնք հոճեցան անձամբ կամ նամակով ցաւակցութիւն յայտնել իր ամուսնոյն՝ Վեր. Ա. Կ. Պետիկեանի մահուանը առթիւ :

ՌԱՊԵՐԴ ԲՈՒԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեկնանը պիտի սկսի Երկուշաբթի Սեպտ. 2/15 : Կարգադրութիւններ եղած են նոր զիւրութիւններ տալու վաճառականական ուսման համար : Մնայուն բժիշկ մը՝ աշակերտաց առողջութեան, մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ պիտի նկէ Այս տարի կը բացուի նաեւ փոքր տղայացատկացեալ նոր շէնքը, մասնաւոր հովիտութեան տակ, ուր կարելի պիտի ըլլայ այնուհետեւ մինչեւ տասը տարեկան աշակերտներ ընդունել :

Արսօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆրեճանընար եօղուղու, Թիւ 27

ԱՊՐԱՌԻԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՄ
Յաճախորդաց դիրքում
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Եթե կ'ուզեք ամէն
տեսակ գոճարեղէններ
ունենալ, գիտեցե՛ք
կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց քիւ 13



Հերմայի վաճառատունը ունի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոճարեղէններ,
ամենքն ալ տաաջնակարգ ըլլալու պայմանաւ:
Հերմայի վաճառատնաց գիներն անմրցելի են,
Հերմայի վաճառատունը ունի արծաթեղէն
ատարկաներ:
Հերմայի վաճառատունը ունի ժամացույցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պատքօն),

ԱՊՐԱՌԱՏՈՐ

Հարիւրին քսան կանխիկ, Յնացեային հա-
մար շարաթեական հարիւրին հինգ վճարում,
կանխիկ գնողին համար 100րն 5 գեղչ,
Գործածուած գոճարեղէններ՝ եթէ մնա-
ուած չեն՝ 100րն 10 գեղչով ետ կառնուին:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, րայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տնտայ մեքենայ մը անվերջ
դժգոյութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ
զւարգործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ:

ԲԵՐԱ, Մեծ Դաղոց, Կալաթա Սէրայի Լիւսէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամկէլին կայարանին Դիմաց

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյադիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաթաւորութիւն

Մասնահիղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՌԱՏՈՒՄ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՁԱԿ

Վարժարանին նոր տարեշրջանը կը սկսի Սեպտ. 10 (ն. Տ.) Դշ. : Տարեթուշակն է գիշերօթիկներուն համար 16 ոսկի օսմ. որուն կէսը վճարելի է սեպտեմբերի սկիզբը, եւ միւս կէսը՝ յունվարի մէջ :

Վարժարանին Տնօրէնին որդին, Մր. Ռ. Չէմպլըս, Քանադայի մէկ նշանաւոր համալսարանին մէջ փայլուն ընթացք մը աւարտելէ եւ Ուսուցիչ Արուեստից տնօրէնին արժանալէ վերջ, կը վերադառնայ յաւաքիկայ տարի, ստանձնելու համար հաստատութեան Անգլիերէն դասերուն մեծագոյն մասը, նախապատրաստական կարգերէն մինչեւ բարձրագոյն կարգը, եւ աշակերտները վարժեցնելու համար այդ լեզուաւ ինչպէս գրելու նոյնպէս խօսելու մէջ. իր դասախօսութեան լեզուն պիտի ըլլայ միայն Անգլիերէն : Միւս նոյն ժամանակ, պիտի չարունակուին անգլ. հայ. թարգմանութեան վարժութիւնները բնիկ դասատուաց խնամքին տակ :

Զուլթակահարութեան կանոնաւոր դաս պիտի տրուի փափագող աշակերտներուն տարեկան 2 օսմ. ոսկիի յաւելումովան վճարումով :

Վարժարանին պարտէզին կցուեցան վերջերս բնորոշակ գետիններ, որոնք նոր դիւրութիւններ պիտի տան աշակերտներուն զբոսանքի ժամերը աւելի հաճելի րնելու :

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Ռ. Ռ. Բիթի, Պայպըլ-Հաուս, Կ. Պոլս, կամ վարժարանին Տնօրէն Տր. Ռ. Չէմպլըսի, նամակները ուղղելով Պայպըլ-Հաուս :

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ
ՈՍԿԵՂԷՆ ԲԱՆԱԼԻ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵՋՈՒԻ
360 ԵՐԵՍ

Խիստ կարճ ժամանակի մէջ կ'ուսուցանէ կարգաւ եւ հասկնալ, խօսիլ ու շարագրել, գիրքին եւ զուարճալի կերպով : Կեդրոն Յ. Մատթէոսեան վաճառատուն :

Գին 15 դահեկան :

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հասուցեալ շնասք	240,000,000 Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հասուցեալ շնասք	99,000,000 Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստը	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ Հիւնիօնի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԴՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Եւսաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Խնիօնի ապահովագրուողը ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Եւսաբաժիններու բազմում (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլս, Կալարա, Քանսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիւանք Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ